

ՍՐՔԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՎԵՆԹՈՒՐԱ ԳԱՒԱՌԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ

Կիրակի, Յունուար 17ին, Սրբազան Հայրը հովուական այցելություն շնորհեց Վենթուրա Գալառի Հայց. Եկեղեցւոյ: Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց: Սուրբ Սեղանին սպասարկեցին եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Յարութիւն Քինյ. Թաշճեան եւ Սարկաւազները:

Սրբազան Հայրը պաշտօնի հաստատման արարողութիւնը կատարեց Արժ. Տ. Յարութիւն Քինյ. Թաշճեանի, որ Սրբազան Հօր կողմէ վերջերս Ծուխին հոգեւոր հովիւը նշանակուած էր: Իր գնահատութիւնը յայտնեց Ծխական Խորհուրդին՝ Աստուածատուութեամբ Բրշ. Տէյվիտ Սրկ. Էսայեանի, որ մօտէն կը գործակցին Տէր Հօր հետ, որպէսզի աւելի կազմակերպուի Ծուխը եւ զօրանայ:

Սուրբ Պատարագի ընթացքի տեղի ունեցաւ ընդունելութիւն, որու ընթացքին բարի գալստեան խօսքեր արտասանուեցան նոր հոգեւոր հովիւին: Սրբազան Հայրը տուաւ իր հոգեւոր պատգամը եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Ծուխը նոր ոգեւորութեամբ լեցուած է եւ կոչ ուղղեց բոլորին, որ համախմբուին Տէր Հօր շուրջ եւ քաջաբար շարունակեն իրենց հոգեւոր առաքելութիւնը: